ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **19/նոյեմբերի/2019 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...7..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ__Սամվել Մարգարյանը, Հերհեր գյուղի վարչական ղեկավար Անդրանիկ Աբրահամյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Մարիամ Առաքելյանը, աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 19-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի N 52-Ա որոշման մեջ լրացում և 2019 թվականի հունվարի 23-ի N 11-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու, կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու և այդ փոփոխությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Հուղարկավորության կազմակերպման համար տրամադրված սոցիալական օգնության մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Թադևոսյան

1.8. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.9. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.10. Ջերմուկ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

1.11. Դրամական հատկացումներ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան

1.12. Դրամական հատկացումներ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան

1.13. Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում ծնողների կողմից կատարվող վճարների զեղչ կիրառելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի հետևյալ փոփոխությունների մասին առաջարկությունը. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002- «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից նվազեցնել 6274.0 հազար ՀՀ դրամ , որից՝

1.1 4062.9 հազար ՀՀ դրամն ուղղել բաժին 06, խումբ 02, դաս 01, ծրագիր 51, 210002- «համայնքային զանգացում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին՝ հաշվի առնելով այն, որ 2019 թվականի ընթացքում «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից կատարվել են լրացուցիչ վճարովի ծառայություններ, հաշվեգրվել է 12727.920 ՀՀ դրամ գումարի եկամուտ, որի 32 տոկոսը՝ 4062,9 հազար ՀՀ դրամն ուղղվել է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգմանը:

1.2 1486.1 հազար ՀՀ դրամն ուղղել բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002 - «օրենսդիր, գործադիր մարմիններ և պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4222 (արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) տնտեսագիտական հոդվածին 686.1 հազար ՀՀ դրամ, տարածքի վարձակալության , ձևավորման, բուկլետների տպագրման համար 4237 (ներկայացուցչական ծախսեր) տնտեսագիտական հոդվածին ՝ 800.0 հազար ՀՀ դրամ:

1.3 725.0 հազար ՀՀ դրամն ուղղել բաժին 10, խումբ 07,դաս 01, ծրագիր 51,210002 - «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասին չպատկանող) գործառնական նշանակության ծախսերի կատարման հախահաշվի 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից)՝ համայնքի ուսանողների ուսման վարձերը փոխհատուցելու նպատակով և 4729 (այլ նպաստներ բյուջեից) տնտեսագիտական հոդվածներին համապատասխանաբար 425.0 հազար ՀՀ դրամ և 300.0 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝

1. Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում ս/թ դեկտեմբերի 2-ից 6-ը կայանալիք «Ռուսաստանում և այլ երկրներում բժշկական և բուժական ծառայությունների և տեխնոլոգիաների 3-րդ միջազգային՝ MedTravelExpo ցուցահանդեսին» Ջերմուկ քաղաքի առողջարանային պոտենցիալը ներկայացնելու և քաղաքը միջազգային հարթակում ներկայացնելու համար Ջերմուկ համայնքի ներկայացուցչի այցը և մասնակցությունը (ճամփորդության և կեցության ծախսեր) կազմակերպելու, ինչպես նաև քաղաքի համար առանձնացված տաղավարը կահավորելու և բուկլետներ պատվիրելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 1486100 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար հարուր) դրամ, որից՝ 686100 (վեց հարյուր ութսունվեց հազար հարյուր) դրամը գործուղման ծախս և 800 000 (ութ հարյուր հազար) դրամը՝ տաղավարի կահավորման և այլ անհրաժեշտ ծախսերի համար՝ համապատասխան փոփոխություններ կատարելով համայնքի բյուջեի տնտեսագիտական հոդվածներում (հաշվարկը՝ համաձայն սույն որոշման հավելվածի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ----7------ *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*--0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» N 52-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ որոշման 1-ին կետի «բ» ենթակետը լրացնել նոր՝ հետևյալ ենթակետերով՝

«4. Սաֆարյան Արա (Ջերմուկի ՍԱՏԲ պետ)՝ համաձայնությամբ
5. Վարդանյան Ստեփանոս (համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ)
6. Քոլայան Արևհատ (Ջերմուկի Մ. Գորկու անվան դպրոցի ուսուցչուհի, «Ապագայի շողեր» ՀԿ նախագահ)՝ համաձայնությամբ»:

2. Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային

եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին N 11-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 2-րդ կետում «670 000 (վեց հարյուր յոթանասուն հազար)» թիվը փոխարինել «50 000 (հիսուն հազար)» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 06.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 346-Ն որոշման 22-րդ կետի պահանջով՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը՝ ի գիտություն ընդունելով, որ Ջերմուկ համայնքի համայնքապետարանի վարչական շենքում (հասցեն՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց, շենք N 8) տեղադրված ազդարարման համակարգի 1 Ս-40 մոդելի շչակը և 1 Պ 164 մոդելի կառավարման վահանակը, որպես գույքային արժեք, ամրագրվել է համայնքի հաշվեկշռում

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 1 ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ և 42-րդ ենթակետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով՝

1. «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ երգահան, երաժշտագետ, խմբավար և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանի անվամբ՝ «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ:

2. «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ ամբողջ տեքստի մեջ «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

3. Հաստատել նշված ՀՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7------ *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին
ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշման հավելվածի 14-րդ կետին համապատասխան՝

1. Ընդունել ի գիտություն, որ Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից հանգուցյալներ՝ Հերհեր գյուղի բնակիչ Սեդրակ Հունանյանի, Ջերմուկ քաղաքի բնակիչներ Ժորա Սարգսյանի, Նորիկ Հովհաննիսյանի և Դանիել Աբրահամյանի հուղարկավորությունների կազմակերպման համար 100000-ական (հարյուր հազարական) դրամի սոցիալական օգնություն է տրամադրվել նրանց ընտանիքին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----7------ Դեմ----0.--- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ,ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

հողամասի օտարման նպատակը	հողամասի գտնվելու վայրը	մակերեսը, քմ	մեկնարկային գինը, դրամ	հողամասի ծածկագիրը	նպատակային նշանակությունը	գործառնական նշանակություն կամ հողատեսքը
բնակելի կառուցապատման համար	ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 10-րդ փողոց N 20	32	40 000	10-002-0032-0091	բնակավայրերի	բնակելի կառուցապատման
բնակելի կառուցապատման համար	ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս 6-րդ փողոց N 2/3	28	30 000	10-002-0032-0090	բնակավայրերի	բնակելի կառուցապատման
հասարակական կառուցապատման համար	ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 13/1	320	300 000	10-002-0042-0009	բնակավայրերի	այլ հողեր
գյուղատնտեսական գործունեության համար	ք. Ջերմուկ	11918,9	100 000	10-002-0420-0004	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համ.	ք. Ջերմուկ	25770,5	162 000	10-002-0104-0006	գյուղատնտեսական	այլ հողատեսք

գյուղատնտեսական գործունեության համար	ք. Ջերմուկ	30124,3	188 300	10-002-0104-005	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համ.	գ. Հերհեր	3067	21 000	10-028-0148-0016	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերհեր	8332,5	57 000	10-028-0148-0054	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերհեր	20535,4	140 000	10-028-0148-0052	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերհեր	11008,3	75 000	10-028-0148-0048	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերհեր	27372	185 000	10-028-0148-	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերհեր	3630,7	30 000	10-028-0148-	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերհեր	2580,2	20 000	10-028-0148-	գյուղատնտեսական	այլ հողատեսք
բնակելի կառուցապատման համար	գ. Կեչուտ, 9-րդ փողոց, 1-ին փակուղի N 4/1	21	25 000	10-002-0047-0013	բնակավայրերի	բնակելի կառուցապատման
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Կարմրաշեն	69103,3	3214000	10-027-0126-	գյուղատնտեսական	արոտավայր
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Կարմրաշեն	55207,4	2570000	10-027-0126-	գյուղատնտեսական	արոտավայր
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Կարմրաշեն	6722,5	313000	10-027-0126-	գյուղատնտեսական	արոտավայր

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,035 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0104-0003) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 20 000 (քսան հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի:

2. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 10-002-0009-0050 կադաստրային ծածկագրով 0,37653 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ պուրակ ստեղծելու համար, ամսական վարձավճարի մեկնարկային չափը՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 30 (երեսուն) տարի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7------ *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը և Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետը՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչներ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողուհիներ Վարդուհի Բագրատի Խանամիրյանին և Սոնա Արսենի Նիկոլյանին, որպես ուսման վարձի մասնակի հատուցում, տրամադրել համապատասխանաբար՝ 200 000 (երկու հարյուր հազար) և 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ

համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգը հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչների դիմումները և դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը՝

1. Ջերմուկի համայնքի 2019 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

Արփինե Առուստամյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Նազիկ Աբգարյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Գեղանի Խաչատրյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՁԵՂՉ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետին համապատասխան, հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատողի) և ««Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի մանկավարժների համատեղ հետազոտությունների արդյունքները՝

1. Ջերմուկ համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ Էրիկ Մկրտիչի Գրիգորյանի և Ռաիսա Պավելի Գրիգորյանի համար 2019 թվականի սեպտեմբերի 1-ից կիրառել ծնողների կողմից կատարվող յուրաքանչյուր ամսվա վճարի 50 % զեղչ:

2. Ջերմուկ համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ կես օրով հաճախելու համար սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ Վահե Իշխանի Ասատրյանի, Դավիթ Բաբկենի Կարապետյանի, Նարե Արմենի Խաչատրյանի և Անահիտ Սերժիկի Սիմոնյանի համար 2019 թվականի սեպտեմբերի 1-ից կիրառել ծնողների կողմից կատարվող վճարի լրիվ փոխհատուցում՝ յուրաքանչյուր երեխայի համար 4200 (չորս հազար երկու հարյուր) դրամ համայնքի բյուջեից փոխանցելով ՀՈԱԿ-ի բյուջետային հաշվեհամարին:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված երեխաների՝ Ջերմուկ համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախումները համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ---------- 7 Դեմ---------- 0 Չեռնպահ---------- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Զավենի բացակա	
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	
Բագրատյան Արտակ Կառլենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի բացակա	
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	
Սարգսյան Հասմիկ Ժորայի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի բացակա	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի բացակա	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը